ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

(Ք. ՎԻԵՆՆԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝** Արմեն Ղազարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.** ք. Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2022թ.հոկտեմբերի 10-ից 12-ը

4. **Հրավիրող կողմը.** Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն (ICMPD/ՄՔԶՄԿ)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Մասնակցել Վիեննայի միգրացիոն տարեկան համաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

   Համաժողովը կազմակերպվում է 2016 թ-ից՝ ամենամյա պարբերականությամբ: Այն համախմբում է քաղաքական գործիչներին, բարձրաստիճան պաշտոնյաներին, կառավարության փորձագետներին, ոլորտի մասնագետներին, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և ակադեմիայի ներկայացուցիչներին և լրատվամիջոցներին՝ միգրացիոն քաղաքականության մշակման կարևոր կողմերը քննարկելու համար:

   Համաժողովի բացման արարողության ժամանակ Ավստրիայի ներքին գործերի նախարար Գերհարդ Կարները և ՄՔՄՄԿ գլխավոր տնօրեն Միխայել Շպինդելեգերը իրենց մտահոգությունները հայտնեցին Եվրոպայում և աշխարհում շարունակվող հակամարտությունների, լայնածավալ տեղահանումների, բնական վտանգների, կենսական ծախսերի աճի, աշխատուժի պակասի և շարունակվող համաճարակի վերաբերյալ՝ կարևորելով միգրացիոն գործընթացների բազմակողմ ու համապարփակ քննարկումը այս համատեքստում:
   Կոնֆերանսի պանելային քննարկումները ևս առնչվել են վերը նշված թեմաներին:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Այցի շրջանակում Ա. Ղազարյանը առանձին հանդիպում է ունեցել ՄՔՄՄԿ միգրացիոն երկխոսությունների և համագործակցության գծով տնօրեն Մարտին Փլյումի և ՄՔՄՄԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային համակարգող Ռադիմ Ժաքի հետ: Կողմերը քննարկել են ընթացիկ համագործակցությունը, ինչպես նաև Հայաստանում Ներքին գործերի նախարարության կազմում Միգրացիայի և քաղաքականության ծառայության ստեղծման համատեքստում համագործակցության հնարավորությունները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.** Չկան

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, ակնկալվող արդյունքները.** Չկան

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

14.10.2022